

ԳՐՔԻ ԵՎ ԸՆԹԵՐՑԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՌՈՏ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ

Թղթագալարներից մինչև էլեկտրոնային գիրք կամ կյանքը Գուտենբերգի գյուտից առաջ եւ հետո

Ինչ ճանապարհ է անցել գիրքը, որ դարաշրջանում ինչպես է ընթերցել և ընթերցանության հետ կապված ինչ սովորություններ է ունեցել մարդը, ինչ փոխակերպումներ կարող ենք ակնկալել գրքի էլեկտրոնային դարաշրջանում: Այս եւ ընթերցանության պատմության հետ կապված բազամաթիվ այլ հարցերի պատասխաններ կստանաք ու հետաքրքիր այլ մանրամասներ կիմանաք սեպտեմբերի 10-ին, ժամը 14:00-ին, Հայաստանի ազգային գրադարանում:

Թամանյանական մասնաշենքի փոքր ցուցասրահում կներկայացվի ընթերցանության պատմությանը վերաբերող գրականություն:

Ընթերցանության պատմության թեմայով դասախոսությամբ հանդես կգա գրականագետ, արձակագիր, Ազգային գրադարանի տնօրեն Հրայր Սարիբեկյանը:

